

Գավառի պետական համալսարան
2026-2027 ուստարվա «Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/»
մասնագիտության մագիստրատուրայի ընդունելության հարցաշար

1. Հաշվապահական հաշվառման առարկան, նրա կարևորագույն օբյեկտները:
2. Հաշվապահական հաշվառման մեթոդը, նրա տարրերը և դրանց փոխադարձ կապը:
3. Ֆինանսական հաշվետվությունների կազմը և բովանդակությունը :
4. Հաշվապահական հաշիվների կառուցվածքը, բովանդակությունը:
5. Կրկնակի գրանցման եղանակի էությունն ու նշանակությունը:
6. Սինթետիկ և անալիտիկ հաշվառման բնութագիրը, դրանց փոխադարձ կապը:
7. Հաշվապահական փաստաթղթերի բովանդակությունը, նշանակությունը և կարևոր վավերապայմանները:
8. Գույքագրումը, դրա անցկացումը և հաշվառման մեջ արդյունքների արտացոլման կարգը:
9. Կալկուլյացիան որպես արտադրության ծախսերի խմբավորման, նրանց չափման և ինքնարժեքի որոշման միջոց:
10. Ֆինանսական հաշվառման հաշվային քաղաքականությունը:
11. Հիմնական միջոցներ, դրանց սահմանումը, ճանաչումը, դասակարգումը և գնահատումը:
12. Ներդրումային գույքի սահմանումը, ճանաչումը և սկզբնական չափումը:
13. Ֆինանսական ակտիվների սահմանումը, դասակարգումը, ճանաչումը և սկզբնական չափումը:
14. Ոչ նյութական ակտիվների սահմանումը, դասակարգումը, գնահատումը և ճանաչումը:
15. Պաշարների սահմանումը, դասակարգումը և գնահատումը:
16. Դրամարկղային գործառնությունների հաշվառումը:
17. Հաշվարկային հաշվի հետ կապված գործառնությունների հաշվառումը:
18. Կանոնադրական կապիտալի հաշվառումը:
19. Ֆինանսական արդյունքների հաշվառումը:
20. Իրացումից հասույթի սահմանումը, չափումը և հաշվառումը:
21. Շահաբաժինների գծով պարտավորությունների հաշվառումը:
22. Շահութահարկի հաշվարկման կարգը և հաշվառումը:
23. ԱԱՀ – ի հաշվարկման կարգը և հաշվառումը:
24. Պահուստային կապիտալի հաշվառումը :
25. Ակտիվներին վերաբերող շնորհների հաշվառումը:
26. Կրեդիտորական պարտքերի հաշվառումը:
27. Բյուջեի գծով պարտավորությունների հաշվառումը:
28. Աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունների հաշվառումը:
29. Ուղղակի արտադրական ծախսումների հաշվառումը:
30. Իրացման ծախսերի հաշվառումը:

31. Վարչական ծախսերի հաշվառումը:
32. Դեբիտորական պարտքերի հաշվառումը:
33. Հարկային հաշվառման էությունը, նպատակը, ուսումնասիրման օբյեկտները և վարման ձևերը
34. Համախառն եկամտից կատարվող նվազեցումները և դրանց հարկային հաշվառումը
35. Հարկային հաշիվը, դուրսգրման և դուրս չգրման դեպքերը
36. Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման կարգը
37. Եկամտային հարկ վճարողները, հարկվող օբյեկտը Եկամտային հարկի հաշվարկման և վճարման կարգը
38. Ակցիզային հարկի հարկման բազան, հարկման օբյեկտը, դրույքաչափերը, վճարման ժամկետը
39. Հողի հարկով հարկման օբյեկտը, պարտավորությունների հաշվարկման, վճարման կարգը, հաշվառումը
40. Գույքահարկով հարկման բազան, պարտավորությունների հաշվարկման, վճարման կարգը, հաշվառումը
41. Հանրային հատվածում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառումը
42. Ակտիվների հաշվառումը հանրային հատվածում
43. Պաշարների հաշվառումը հանրային հատվածում

Օրենքներ, ստանդարտներ և գրականության ցանկ

- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը: Երևան, 2019թ
- ՀՀ Հարկային օրենսգիրք Երևան, 2016թ, ՀՕ-165-Ն, Երևան
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ. Երևան, 2019թ
- «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը: Երևան, 2014թ
- Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ. ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2014թ թիվ 725-Ն հրաման
- Կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան. Երևան, 2012թ, ՀՀ ֆինանսների նախարարի 17.04.2012թ թիվ 353-Ն հրաման
- Մովսիսյան Թ. Հաշվապահական հաշվառում. ուս. ձեռնարկ. Երևան, 2020 թ